

891.21

L-49

3700



869

4832

1/2



ՁԻ. 71-1

L-49

Ս. ԼԵՐՄՈՆՏՈՎ

Գ Ե Ի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԵՊ

Թարգմանոթիւն

ՄԵԼՔՈՆ ԱՅՏԸՆԵԱՆԻ

ԹԻՓԼԻՍ

Տպարան Ս. Շարսմեհի, Նիկոյ. փ. տ. 21

1898



891.71

L-49

պջ.

Մ. ԼԵՐՍՈՆՏՈՎ

Գ Ե Ի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԵՊ

1001  
4832



Թարգմանաթիւն

ՄԵԼՔՈՆ ԱՅՏԸՆԵԱՆԹԱՐԱՆ

— 5005 —

Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարահի, Կիկոյ. փ. տ. 21

1898



31556-42

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Юля 1898 г.

2003

2011

14550-589

# Դ Ե Ի

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԷՊ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա.

Տխուր Դւը, արտաքուստ ոգին,  
 Թուիչք էր տալիս երկրիս վրայով.  
 Եւ Տինաւուրց յուշիկներն անգին  
 Նրա միտքն էին գալիս խմբով —  
 Այն օրերի, երբ աշխարհում  
 Քերօքէի պէս էր փայլում,  
 Երբ գիսաւոր աստղը սուրալով  
 Մերթ ողջոյնի գգուալից ժպտով  
 Փոխարկել էր նրա հետ սիրում.  
 Երբ մշտակայ մէգի միջեցն էր,  
 Նա գիտութեան ծառաւով, գիտում  
 Լոյս աստղերի թափառիկ պարեր  
 Ցիրօցան ընկած տիեզերքում.  
 Սրբ հաւատում էր և սիրում  
 Արարչութեան առջնեկն երջանիկ,  
 2ը գիտէր ո՛չ ոխ, ո՛չ կասկածիք,




Եւ չէր սպաննում խելք ու մտքին  
 Փուճ դարերի ընթացք տխրաբեր...  
 Եւ շատ բան... բայց բողոքովին  
 Միտք բերելու դրանք՝ նա ոյժ չունէր:

## Բ.

Վաղուց անտուն՝ թրև էր գալիս  
 Մերժեալն՝ երկրիս չոր անապատում:  
 Վաղում էր դար դարի յետքից  
 Արագ, ինչպէս բուսէր են սահում,  
 Միանըման տխուր հերթով:  
 Չնչին երկրի վրայ իշխելով՝  
 Նա անզուարճ չարիք էր ցանում.  
 Ոչ մի տեղ իւր ճարպիկութեան  
 Նա չէր գտնում մի գիմադրութիւն—  
 Եւ չարիքը ձանձրացրեց նրան:

## Գ.

Եւ Կովկասի գագաթների վրայ  
 էր նա թռչում դրախտից արսորեալ:  
 Գոհարի պէս, Կազբէկ, տակն ահա,  
 Յաւերժ ձիւնով էր լուսափայլ.  
 Եւ խոր՝ սեկն տալով անդնդում  
 Իբրև ճեղքածք, վիշապների բոյն,  
 Գալարում էր ոլոր Դարեալ.  
 Եւ կատաղի վագրի նման էր  
 Փրփրուն Տերեկ ցածրում ոռնում.



Վայրի գազան և թռչուններ,  
 Պտոյտ գալով լազուարթ օդում  
 Նրա ջրերի զրոյցն էին լսում.  
 Եւ ոսկեփայլ ամպեր հեռւից,  
 Հարաւային երկիրներից,  
 Դէպի հիւսիս էին նրան ձանապում.  
 Եւ լերկ ժայռեր խուռն խմբով,  
 Խորհրդաւոր բուն ու նիրհով լիք,  
 Նրա վրայ էին թեքած գլխով  
 Գիտելով վէտ-վէտ ջրեր ալիք:  
 Եւ ժայռանիստ բերդի բուրգեր  
 Մէգի միջից նայում էին խրոխտ.  
 Կովկասի Դռան վիթխարիներ  
 Ըսպառազէն—իբրև պահանորդ:  
 Եւ վայրագ էր և հրաշային  
 Ողջ աշխարհ, բայց հպարտ ոգին  
 Չգեց ակնարկ, աչք արհամարհիչ  
 Իւր Ստեղծողի ստեղծութեան վրայ,  
 Եւ նրա գոռոզ ճակատի վրայ  
 Չ'անդրադարձաւ, ո՛հ, և ո՛չ մի ինչ:

## Դ.

Եւ նրա առաջ ուրիշ պատկերի  
 Գեղեցկութիւնը նկարեցին.  
 Հովիտները՝ վրաց ձոխ երկրի  
 Հեռուն՝ գորգի պէս ձգեցին:  
 Բաղդաւո՛ր, պէ՛րճ կողմ երկրային:  
 Սիւնատեսակ շերտեր ժայռերի,



Կարկաջահոս վազան գետեր,  
 Տակը գոյն-գոյն քարերով պճնած,  
 Վարդի թփեր, ուր սոխակներ  
 Սիրուն վարդն են երգում, անդարձ  
 Իրանց ձայնին՝ սյնքան հեշտասէր,  
 Սօսիների ոստապատ հովեր,  
 Հիւսուած խիտ - խիտ բազեղներով,  
 Այրեր, շոգիցն՝ ուր ցերեկով  
 Թաք են կենում վախլուկ այծեամներ,  
 Փայլ, կեանք, շշուկ տերևների,  
 Բազմահնչիւն խօսք ձայների,  
 Բոյր բոյսերի, ծաղկանց բազմասեռ,  
 Եւ կէսօրայ տօթ տարփալի,  
 Քաղցրանուշ շաղ ու ցօղով լի  
 Գիշերներ ընդ միշտ խոնաւաբեր,  
 Եւ վառ աստղեր, իբրև աչիկներ,  
 Տէսք մատաղ՝ հաս վրաց կոյսերի:  
 Բայց, բացի ցուրտ ու պաղ նախանձից,  
 2ը յարուց պերճ բնութեան շուք,  
 Աքսորեալի ապառաժ կրծքից  
 Ո՛չ մի նոր ոյժ, ո՛չ մի զգացմունք—  
 Եւ ողջ, որ իւր առաջն էր տեսնում,  
 Նա ատում էր կամ արհամարհում:

Ե.

Մի բարձրր տուն, ընդարձակ բակ  
 Ծերուկ Հուզախ իւր համար շինեց...  
 Հատ ջանքի և արցունքի նստեց

Եյբ՝ ճորտերին, միշտ հպատակ:  
 Սարի լանջին, արևծագից,  
 Ընկնում են նրա պատերից սոււերներ,  
 Ժայռում փորւած են ոտնատեղեր,  
 Անկիւնային աշտարակից  
 Գետն են իջնում: Եւ նրանցով, հագին  
 Սպիտակ լաշակ, ցած է գալիս  
 Մատղաշ Թամար— մեծ իշխանուհին—  
 Ջուր առնելու Արագւայից:

Զ.

Հովիտների վրայ միշտ լուռ— անձայն  
 Նայում էր ժայռից տունն ահեղ,  
 Բայց խնձուք կայ այսօր այնտեղ,  
 Ածում գինին, հնչում է զուռնան,  
 Հուզալ աղջկայ նշանն արեց,  
 Դուռ— դրրացի տօնի կանչեց:  
 Ողջ գորգերով պատած տան կտրում  
 Նստած է հարսն աղջկերանց մէջ,  
 Ժամանակն երգ ու պարի մէջ  
 Է անց կենում: Սարերը հեռուն  
 Ըսքողում են արևն անշէջ,  
 Նրանք չափաւոր ծափ տալով հանդարտ,  
 Երգում են, և իւր դահիրան  
 Վէր է առնում հարսն երիտասարդ—  
 Եւ, ահա, մի ձեռով միայն  
 Գլխին պտոյտ տալով նա այն,  
 Մերթ թռչում է թռչնից էլ արագ:



Մէկ էլ կանգ է առնում, դիտում,  
 Եւ խոնաւ աչքն է շողշողում...  
 Նախանձայոյդ թերթերունքի տակ.  
 Մէկ կամար, սև ունքն է կիտում,  
 Մէկ էլ յանկարծ թերւում է մի քիչ,  
 Եւ գորգի վրով սահում, անցնում  
 Են նրա ոտներ նազիկ և դիւթիչ.  
 Ե՞՞ ժպտում է նա քաղցր այնքան,  
 Լի զուարթութեամբ ճիշտ մանկական:  
 Բայց լուսնի շող, որ ջրի երեսին  
 Մերթ խաղում է թեթևասոյր,  
 Հազիւ և եթ հասնի այն ժպտին,  
 Առոյգ, ինչպէս կեանք կենսատուր:

## Ե.

Կէս գիշերւոյ աստղը վկայ  
 Արևի ելն ու մտի շողեր.  
 Որ Իրանի շահն ոսկեգահ  
 Եւ ո՛չ մի այլ երկրի արքայ,  
 Չէ համբուրել նման աչեր:  
 Հարեմի ջինջ շատրւանն էլ,  
 Ո՛չ մի անգամ, շոգ ժամանակին,  
 Իւր ցողերով աբամանդային,  
 Նման հասակ չէ ողողել:  
 Կ'երգւեմ, ո՛չ մի հողեղէն ձեռք ցարդ,  
 Շոյելով նրա աղւորիկ ձակատ,  
 Այդպիսի մաղ ծամ չէ հիւսել:  
 Երկրիս՝ դրախտից զրկւելուց ի վեր,

Կ'երգւեմ, դրա պէս գեղեցկուհի դեռ  
 Ճոխ հարաւում չէ՛ վըթըթել:

## Ը.

Վերջին անգամ էր նա այն պարում...  
 Մե՛ղք, սպասում էր վաղ առաւօտուն  
 Նրան, Հուգալի խեղճ ժառանգուհուն,  
 Ազատութեան կայտառ աղջկան  
 Ստրկուհու չար բաղդ — ձակատագիր,  
 Այնուհետև էլ օտար երկիր,  
 Անծանօթ տուն ու բնակարան:  
 Եւ յաճախ մի կասկածանք ներքին  
 Պայծառ դէմքն էր նըսեմացնում.  
 Բայց իւր բոլոր շարժմունքներն էին  
 Այնքան շնորհքով, ազդիչ ամենին,  
 Պարզմըտութեամբ այնքան գեղուն,  
 Որ եթէ Գևն անցնէր թուջելով,  
 Եւ նոյն բոպէ նրա վրայ նայէր,  
 Նախկին եղբարց նա միտք բերելով՝  
 Գարձի կը գար — կը հառաչէր...

## Թ.

Եւ տեսաւ Գևն... Եւ մի բոպէի  
 Ալեկոծումն անբացատրելի  
 Յանկարծակի իւր մէջ զգաց նա:  
 Անպատը՝ նրա համըր հոգու՝  
 Սուրբ հնչիւնով լցւեց. և նա



Նորից եղաւ սրբութեան հասու՝  
 Սիրոյ, բարու և գեղեցկի...  
 Եւ երկար նա բաղդրիկ պատկերով  
 Հրճուամ էր, — և նախկին բաղդի  
 Յուշիկները երկար շղթայով,  
 Իբրև աստղ աստղի յետքից,  
 Գլորում էին իւր առաջից.  
 Աներևոյթ զօրութեամբ մխած  
 Նա տիրացաւ նոր վշտերի,  
 Ջգացումնը նրա մէջ խօսեց յանկարծ  
 Լեզուով երբեմն իւր մայրենի:  
 Աերածնութեան արդեօք այդ շո՛ւքն էր:  
 Նա նենգաւոր փորձութեան խօսքեր  
 Չը կարաց իւր մտքում գտնել:  
 Մոռ'նա՛լ: Աստուած այդ չէր տըւել,  
 Եթէ տար իսկ, նա միթէ կառնէ՞ր:

ժ.

Չարչարելով բաջ նժոյգին,  
 Հարսանիքի, արևմտին,  
 Ըշտապում էր փեսան անհամբեր:  
 Մինչ Արագւայ, կանաչկոտ ափեր  
 Հասաւ անփորձ ու բարեբաղդ:  
 Ընծաներով բեռնած բարդ, բարդ  
 Նրա յետևից, դանդաղ բայլերով,  
 Ուղտերի ձիգ-երկար շարքն էր  
 Օր-օր գալով ձգւած նոյն ճանապով.  
 Ջնգզնգում են նրանց բոժոժներ...

Նա ինքն է այն, տէր Սինդալի,  
 Վարողը ճոխ կարաւանին:  
 Քամար է կապ ձկուն մէջքին.  
 Սրևից՝ նրա սուր ու խանչալի  
 Նախշն է փայլում. իսկ կռնակին  
 Գեղաբանդակ հրացան անգին.  
 Խաղում է հոգմ նրա չուխի կախած  
 Թևքերի հետ. որի չորս դին  
 Երիզ է կար ամբողջովին:  
 Մետաքսներով է թամբը նախշած  
 Գոյն-գոյն. սանձն էլ փնջերով պճնած:  
 Տակն ողջ սապնոտ է նժոյգ ձին,  
 Ոսկիափայլ, գոյն թանգագին: —  
 Կայտառ որդին այդ Սինետաց երկրի,  
 Ականջներն է խշում ահով լի.  
 Խրինջալով զառիվայրից  
 Շեղում է նա ջրին փրփրայից:  
 Ահաւոր է, նեղ ափնեայ ուղին,  
 Ապառաժներ են ձախ կողմից,  
 Աջ կողմը խորք գետի զայրագին:  
 Ո՛ւշ է: Հանգաւ սարի գագաթին  
 Աերջին շողն և մոայլ տարածեց...  
 Կարաւանն իւր բայլ շուտացրեց:

ժԱ.

Ահա ճանպի վրայ մատուռ կանգնած...  
 Վաղուց այդտեղ հանգչի առ Աստուած  
 Ինչ - որ իշխան, բայց սուրբ հիմի,



Անխընայ զո՛հ իւր ոսոխի:  
 Այն օրից դէպ ի տօն կամ թէ մարտ,  
 Ուր էլ շտապէր ամեն ճանպորդ,  
 Ամեն անգամ այնքան ջերմեռանդ  
 Աղօթում էր այն մատուան մօտ:  
 Եւ այդ աղօթքն էր նրան պահողը,  
 Թուրքի սուր ու թրից փրկողը,  
 Բայց նոր փեսան թողեց անփոյթ  
 Իւր պապերի սյդ սովորոյթ, —  
 Նրան, նենգաւոր, չար խաբանքներով  
 Չարամիտ Դենն էր վրդովում:  
 Նա մըտախաբ գիշերւայ մթնով  
 Հարսի պօռններն էր համբուրում...  
 Հրէ՛ս դուրս եկաւ նրա դէմ երկու մարդ,  
 Էլի... Պայծի՛ւն... Ո՛հ, ի՞նչ բան է այդ:  
 Ասպանդների վրայ պինդ կանգնած,  
 Փափախը ցած ճակ՛տին քաշած,  
 Մի խօսք չասեց իշխանն անվեհեր.  
 Լի հրացանը ձեռքին փայլեց.  
 Խփեց մտրակն ու վրայ ձգւեց  
 Իբր արծիւ, — և նորից պայծիւններ, —  
 Եւ վայրի ճիչ, և խուլ հռուսչ  
 Դէպի հովտի խոր ձորեր սլացան...  
 Շատ չը տւեց այն կոտորած՝  
 Երկչոտ վրացիք շուտ փախուստ դարձան:

ԺԲ.

Եւ ողջ լռեց... խոնւած, ահա,  
 Հեծեալների գիերի վրայ՝

Դիտում էին ահաբեկ ուղտեր:  
 Եւ լո՛ւռ դաշտում խուլ, խառնաղանջ  
 Հնչում էին մերթ նրանց զանգակներ:  
 Ողջ կարաւանն է կողոպտւած...  
 Դիերի վրայ անթաղ ընկած  
 Գիշերահաւան է գործում շրջան:  
 Նրանց չի սպասում, խաղաղ գերեզման  
 Վանքի օրհնած սալերի տակ.  
 Ուր թաղւած կան նրանց նախահարբ:  
 Չեն գալ մայրեր ու բոլորեր խմբով,  
 Ծածկւած սպիտակ, լայն լաչակներով,  
 Թախծով, կոծով ու աղբրսագին,  
 Հեռու տեղից նրանց դամբարանին:  
 Բայց ջերմեռանդ ձեռներով դրա տեղ  
 Ժայռի տակին, ճանպին կից, նոյն տեղ  
 Ի յիշատակ խաչ կը տնկւի:  
 Եւ գարունքին օձաձև բաղեղ  
 Նրա չորս կողմը կը փաթաթւի  
 Զմրուխտափայլ իւր ցանցիկներով:  
 Եւ դժուարին ճանպից շեղելով  
 Յոգնած անցորդ յաճախակի  
 Սուրբ սուերի տակ հանգիստ կ'առնի:

ԺԳ.

Եղնից արագ է նրա ձին սլանում,  
 Խամփում, ասես ուղղի է ձգում.  
 Մերթ կանգնում է յանկալ՝ վաղբին,  
 Ուշք է դնում նա հովիկին,



Պնչերը լայն-լայն բաց անելով,  
 Մէկ էլ տեսնես գետնին խփելով  
 Զոյգ պայտերով բարձրահնչիւն,  
 Եւ պոճնկուած բաշով թափի ի թափ  
 Գժեւած յառաջ է նա թռչում:  
 Վրան մի հեծեալ կայ ողջ ուշաթափ.  
 Նա մերթ զարկում է թամբի վրան,  
 Ընկած գլխով թաւ բաշի վրան:  
 Էլ չի շարժում նա երասաններ,  
 Խրած ոտներն ասպանդներում,  
 Լայն հոսանքով արիւնն անդադար  
 Պերճ ծածկոցի վրան է հոսում...  
 Թռչկան ձի, դու բո տերոջ թէւ,  
 Նետի պէս դուրս տարար մարտից,  
 Բայց օտի չար գնդակ սըրաթեւ  
 Նրան հասաւ մինչ մոայլի միջից:

## ԺԴ.

Հուգալի տանն է ողբ, լաց ու կոծ,  
 Գուրսը ամբօս է խոնրում.  
 Ո՞ւմ ձին է այդ դարձած կրակ ու բոց,  
 Ընկած բարի վրայ դարպասում:  
 Ո՞վ է այդ անկեղծան այրուձին:  
 Կուէի յուզմունք պարզ կրում էին  
 Նրա թուխ ճակտի խոր կնճիռներ:  
 Նրա զէնք ու զգեստն արիւն են կտրած,  
 Օրհասական ցասկոտ բռունցք սեղմած  
 Բաշի վրան նրա ձեռն է սառել:

Հորս, բո ակնարկ երկար չսպասեց  
 Երիտասարդ փետի ճանպին.  
 Իշխանական խօսքը նա պահեց,  
 Սլացաւ, հասաւ հարսանիքին...  
 Աւա՛ղ, այսուհետեւ, նա երբէք  
 Չէ հեծնելու իւր ձին սանձաբեկ:

## ԺԵ.

Եւ այն անհոգ ընտանեաց վրայ  
 Տիրոջ պատիժն ընկաւ շանթի պէս:  
 Տարածւած իւր անկողնի վրայ  
 Լալիս է խեղճ Թամար սաստկապէս,  
 Թափւում է յորդ արցունք աչքից,  
 Կուրծքը բարձր ու դժուար շնչում է...  
 Եւ կարծես թէ, ահա լսում է  
 Նա իւր մօտը մի ձայն հրաշալից՝  
 «Մի՛ լար ի զուր, մի լար դու, տղայ,  
 Քո արցունքն անշունչ դիակի վրայ  
 Ո՛չ, չի դառնար ցօղ կենսաբեր.  
 Քո ակնարկդ է եթ զպտորում նա,  
 Եւ այրում է բո կոյս այտեր.  
 Նա հեռու է, չի՛ ճանաչիլ նա  
 Քո վշտիդ չի՛ տար մի արժէք  
 Երկնային լոյսն է գգուում հիմա,  
 Նրա աչերի անմարմին տեսք:  
 Նա լսում է դրախտի երգն անձառ...  
 Ի՞նչ են կեանքի սին երազներ  
 Խեղճուկ կոյսի ողբ ու արցունքներ:



Գրախոս ժառանգած հիւրի համար:  
 Մահկանացուի բաղդն ամենեւին,  
 Հաւատա՛ ինձ, հրեշտակ երկրի,  
 Չ'արժէ և ո՛չ մի ակնթարթին  
 Գո թանգագին թանկիծների,  
 Օգտատարած ովկիանի մէջ  
 Առանց ղէկի և անկայմ,  
 Մեղմ լողում են մշուշի մէջ  
 Աստղերի հոյլ գեղակազմ:  
 Եւ դաշտերունն անչափելի  
 Կան երկնածեմ, բայց անհետ,  
 Անձեռնմուխ թուխ ամպերի  
 Հօտեր՝ ընդ միշտ վէտ ի վէտ:  
 Ժամ հրաժեշտի, ժամ տեսութեան  
 Նրանց ոչ վիշտ է, ոչ բերկրանք:  
 Նրանց այն կեանքում իղձեր չըկան,  
 Եւ անցեալին յափոտսանք:  
 Գժբաղդութեան տագնապ օրին  
 Գու նրանց յիշիր մի միայն,  
 Անմասն եղիր դու երկնայնին  
 Եւ անփոյթ ճիշտ նրանց նման:  
 Հէնց որ գիշերն իւր սև ծածկոյթով  
 Սէգ Կովկասի բարձրեր սոււերէ.  
 Հէնց որ աշխարհ դիւթական խօսքով  
 Իբր հմայած, կապած լռէ.  
 Հէնց որ քամին ապառաժի վրայ  
 Թառամած, չոր խոտերը շարժ տայ.  
 Եւ թռչնիկը, պահած նրանց մէջ  
 Ձըւարթ ճախրէ մըշուշի մէջ,

Եւ խաղողի վազի տակն անվախ  
 Երկնային ցօղ կուլ տալով ագահ,  
 Բացւի ծաղիկ գիշերային.  
 Հէնց որ սկսի ոսկեայ լուսին  
 Սարի գլխից մեղմաբայլ ելնել,  
 Եւ գողունի բեզ վրայ աչք ձգել, —  
 Կսկսեմ դէպ ի բեզ թռչել,  
 Հիւր կը մնամ բեզ մօտ մինչ ի լոյս,  
 Եւ կոպերիդ այդ մետաքսաբոյս  
 Վարդ երազներ մեղմիկ փշել:

ԺԶ.

Լռեց ամեն ինչ... Այնտեղ հեռուն  
 Մեռան ձայներ միմեանց յետքից...  
 Շուրջն է նայում թռած տեղից...  
 Անասելի յուզմունք է տիրում  
 Նրա կրծքի մէջ. երկիւղ թանկիծ,  
 Բերկրանքի տապ — անզօր են մնում.  
 Զգացմունքն եւ էր գալիս խորքից.  
 Հոգին կտրում էր իւր պինդ կապանք.  
 Երակներում հուր վազում էր,  
 Եւ այն ձայնը նոր, սիրափափազ,  
 Նրան թըւում էր հնչելիս դեռ:  
 Լուսադէմին ցանկալի բնով  
 Նրա այն յոգնած ակնարկ փակեց  
 Բայց նրա միտքը ողջ վրդովեց  
 Գուշակող և անսովոր ցնորքով  
 Մի եկաւոր համր ու մըսայլ,

14550-58  
 1001  
 14832





Գեղեցկու թեամբն էլ երկնափայլ,  
 Խոնարհւեց ցած նրա գլխաբարձին  
 Եւ նրա ակնարկն այնպէս սիրագին,  
 Այնպէս տրտում նայում էր վրան,  
 Կարծես ցաւում էր նրան այնքան.  
 Չէր այն զուարթուն, չէր երկնաբընակ  
 Նրա սրբասուն պահսպան հրեշտակ.  
 Թագ՝ ծիրանի գօտու շողքից  
 Չէր պճնում նրա գլուխ գանգրալից.  
 Չէր այն ահեղ դրժոխքի ոգի,  
 Անարգ փորձիչ, ո՛հ, ո՛չ երբէք,  
 Նա նման էր պայծառ երեկի՝  
 Ոչ օր—գիշեր, ոչ լոյս, ոչ մեգ:

## ՄԱՍՆ ԵՐԱՐՈՒՄ

Ա.

Հայրի՛կ, հայրի՛կ, թող սպառնայիրներ,  
 Մի՛ նախատիր քո Թամարին:  
 Ես լալիս եմ: Տես, այս արցունքներ...  
 Ոչ առաջինն են, ոչ վերջին...  
 Չեմ վնիլ ես ոչ սքի կին—  
 Փեսաներին, ո՛հ ասա դու,  
 Հողն է ասել իմ քաջ ամուսնին,  
 Սիրտս ուրիշին ես չեմ տալու.  
 Այն օրից երբ արիւնշաղախ դին  
 Թաղւեց սարի տակ մեծ սգով,  
 Ինձ խոզվում է չարանենգ ոգին  
 Անպարտելի պատրանքներով:  
 Լուս գիշերին վրդովում է ինձ  
 Երազների խումբ ահարկու.  
 Ցերեկն սգիս զուրկ է աղօթքից՝  
 Միտքս էլ անզօր բառ հնչելու.  
 Երակներիս մէջ հո՛ւր վազում է...  
 Օր, օր հալւում, թառամում եմ:  
 Հայրի՛կ, հայրի՛կ, հոգիս տանջւում է...  
 Խնայիր ինձ, հայր, փղաչում եմ:



Տա՛ր սրբարար վանատուն, | տա՛ր ինձ  
 Տա՛ր այնտեղ քո անմիտ դասերիդ՝  
 Փրկի՛ւն այնտեղ կը պաշտպանէ ինձ,  
 Կը թափեմ նրա առաջ իմ՝ վիշա:  
 Աշխարհումն էլ ինձ չըկեայ բերկրանք,  
 Խաղաղութեամբ միշտ Աստուածապահ  
 Թող ընդունի մայլապատ օթեակ  
 Իշրե գաղաղ, ինձ այնքան վաղ:

Բ.

Եւ ահա մէկ միայնաշէն վանք  
 Նրան՝ ճնողքը տարան, աբւին,  
 Եւ հեղարար քրձակգեստով նրանք  
 Մատղաշ կուրծքը փաթաթեցին:  
 Բայց այդ զգեստի տակն՝ էլ շատ անգամ,  
 Ինչպէս նախընտրէ գիպակումն էր,  
 Օրինաւ անց մտքերով, դեռ  
 Բաղխում էր սիրտն անաջջայ նման:  
 Բեմի առաջ մոմերը վառ,  
 Յաղթողական օրհներգի ժամին,  
 Ազօթելիս մի ծանօթ հնչիւն  
 Յաճախ լսում էր խեղճ թամար,  
 Մայլ տաճարի կամարների մէջ  
 Ծանօթ պատկերն այն մերթ ընդ մերթ  
 Անձայն սահում էր ու անհետ.  
 Խնկի թեթեւ մառախուղի մէջ  
 Աստղի պէս նա փայլում էր լուռ,  
 Կանչում էր նրան սիրով... բայց ս՛եր...

Գ.

Երկու բլրի մէջ տեղ, այնքան զով,  
 Թաք էր կացել այն մենաստան:  
 Սօսներ ու բարդներ շարքով  
 Պատում էին նրան — և այն ժամ  
 Երբ հանդում էր գեշերը կրճում,  
 Փայլում էր նրանց միջից եցիկում  
 Մատղաշ կոյսի կանթեղն անմար:  
 Չորս կողմ նշի ճառերի սուերում,  
 Ուր կանգնած են շարք խաչեր սրտում,  
 Շիրիմների դէտ անբարբառ, —  
 Երգում էին թուշուր պար պար.  
 Ցատկում էին քարից քար, ձայնում  
 Արեւակներ պաղ-պաղ ջրբով.  
 Եւ կախ ընկած ժայռի տակով,  
 Կրկախառնած սիրով նեղ կրճում,  
 Աղում էին նրանք թփերով  
 Եւ ցողապատ ծաղիկներով:

Դ.

Ահա, սարեր են դէպի հիւսիս:  
 Աարդ արշալոյսն այգին բացելիս,  
 Երբ կապուակող ծուկը մէկ մէկ  
 Պըտրւում է հոփախ խորբում,  
 Եւ դառնալով դէպ արևելք  
 Ազօթքի են մուկզղինք կանչում.  
 Երբ զանգակի սուր զօղանչիւն



Իողորդում է, զարթեցնում վանքին,  
 Փառահեղ ու խաղաղ ժամին,  
 Երբ մատաղ՛հաս վրացի աղջիկներ  
 Երկար կժով ջրրի համար,  
 Ուր սարիցն իջնում են վար, —  
 Յաւերժաձինւ-սարի գագաթներ;  
 Շուշանագոյն-պայծառ պատով  
 Զինջ երկնքում նկարում էին:  
 Արեւտին էլ պատում էին  
 Բոսորագոյն խանձարուրքով,  
 Եւ նրանց միջում, ձեղքած ամպ ու մեգ  
 Ամենից էլ բարձր է կանգնած  
 Զօրեղ արքան Կովկասի, Կազբէկ,  
 Փաթեթ կապած, ճոխ զգեստ հագած:

## Ե.

Բայց յանցապարտ մտած մուկերով լի  
 Թամարի սիրան է անմառաչելի  
 Սուրբ բերկրանքին: Եւ տեսուր ստուեր  
 Է աշխարհիս պատած նրա համար,  
 Եւ այնտեղ նրան ցաւի են պատճառ  
 Լոյս առաւօտ և մոայլ գիշեր:  
 Եւ յաճախ հէնց քնկոտ գիշերայ  
 Հովը երկրիս վրայ է ընկնում,  
 Սուրբ պատկերքի առաջ նա, ահա,  
 Խելակորոյս ծունկ է չորում —  
 Լալիս է և լուռ գիշերն ամբողջ  
 Նրա հառաչանք, ողբ արտասուապոչ

Անցորդի ուշքն է գրաւում ողջ,  
 «Սարի բաջր է, ասում է նա,  
 «Այրի մէջը շղթայւած ողբում» —  
 Եւ ախանջը սուր սրելով նա,  
 Տանջւած ձիւնն յառաջ է բռում:

## Զ.

Սիրան ի թունդ և հոգին ի վիշտ  
 Պատուհանի ծոց Թամար միշտ  
 Տարակուսման մէջ նստած լուռն,  
 Յառած աչքով նայում է հեռուն,  
 Ողջ օրն ախով սպասում է նա,  
 Նրան ոմն ասում է «Նա կը գայ».  
 Զուր չէին նրան երազներ գրւում,  
 Զուր չէր նա նրան երևում յաճախ,  
 Աչքերը լի վիշտ ու տրամուլիւն,  
 Եւ խօսուածքը քնքոյշ ու չքնաղ.  
 Տառապում էր արդէն նա շատոնց,  
 Բայց պատճառն ինքն էլ չըզգիտէր.  
 Թէ աղօթել նա ուղէր սրբոց,  
 Սիրան էլ Արամն միշտ աղերսում էր.  
 Ամենօրեայ կուից յոգնած նա  
 Թէ թեր ընկներ քնի անկողնում —  
 Բարձն այրում էր նրան, վախ էր զգում նա,  
 Եւ ողջ, տեղից վեր թռած՝ դողում.  
 Կուրծքն և ուսերն են ողջ բորբուքած,  
 Շունչն է սպառւել, աչքը մթնել,  
 Սպասում է նրա գիրկ՝ գիրկ փոխադարձ,  
 Բերնում հալւում են համբոյրներ...



## Է.

Օգոսին ծածքն իրիկւայ մղի  
 Վրաց բլուրներ պատեց արագ.  
 Ըստ բաղդրախորժ իւր սովորոյթքի  
 Թռաւ Գլեն, իջաւ փսնատան բակ.  
 Բայց շատ երկար անհամարձակ  
 Մնաց կաղաղ վայրի սրբութեան  
 Գիպչելու:— Եւ լինում էր վայրկեան,  
 Երբ նա պատրաստ է, կարծես թէ,  
 Թողնելու իւր մաքեր զբժընդակի  
 Մըսախորհ, նա բարձր պատի տակ  
 Շրջում է, նրա քայլերիցն է  
 Սաւերում անհոգի մարտըռում:  
 Աչքը վերցրեց՝ նրա լուսամուտ  
 Կանթեղով է լուսւած և փայլում.  
 Մարդի է նա սպասում անշուշտ:  
 Եւ ահա այն խոր լուսթեան մէջ  
 Սաղի թելի անուշ էլ և էջ,  
 Եւ երգի ձայն՝ մեղմ հնչեցին,  
 Եւ այդ ձայներ յորդում էին,  
 Իբր արցունքներ մէկ մէկի յեաքից.  
 Եւ այդ երգը, ս՛հ, բնբոյշ էր,  
 Կարծես երկրի համար լինէր  
 Սուրբ երկնքում սգւած հրաշալից.  
 Չէր դա արդեօք հրեշտակ, որ նորից  
 Հին մտերմին ուզեց տեսնել,  
 Եւ այս տեղ նա թռաւ գողանարգել,  
 Եւ սկըսեց նրան անցեալն երգել,

Որ քաղցրացնի նրա խիտ անցանքն՝ ր...  
 Սիրոյ թախիծն և նրա յուզմունքներ  
 Կեն առաջին անգամ բզգաց...  
 Նա ուզում էր վախով հեռանալ—  
 Նրա թեւեր չեն կտրում թռթռալ:  
 Եւ հրա՛շք— աչքիցն արդէն մարած  
 Գլըլուում է արցունք ծանրահալ...  
 Ցարդ այն եցից ոչ շատ հեռու  
 Ընդ թափ այրւած կըտեսնես մի բար,  
 Զերմ արցունքով, կարծես բոցափառ,  
 Արցունքով, բայց ոչ թէ մարդու...

## Ը.

Եւ սիրելու պատրաստ մտնում է,  
 Հոգւովը բաց բարու առաջ,  
 Եւ կարծում է թէ եկել է  
 Արդ՝ նոր կեանքի ժամ՝ փափագած:  
 Ահնկալման սարսուռ մթին,  
 Երկիւղն անխօս անյայտութեան,  
 Հէնց առաջին տեսութեան ժամին,  
 Հպարտ հոգուն հեռ ծանօթացան:  
 Չարաբաստիկ գուշակունն էր այն,  
 Ներս մտնում է, և ինչ տեսնէ,  
 Դրախտի գետպան— մի բերօրէ,  
 Այն մեղսասէր գեղամունն պաշտպան.  
 Կանգնել է ըյս, պայծառ ճակտով,  
 Եւ թշնամուց, չքնաղ ժպտական  
 Նրան հովանի եղաւ թեով...



Եւ հրկնային ըյտի շող, յանկարծ,  
 Կուրացրեց նրա պիղծ — չար ակնարկ:  
 Եւ փոխանակ սիրոյ փոխազարծ  
 Թնդաց մի խիստ արճամարճանք:



Ոգի՛ն խոռվիչ, Գև՛ արատաւոր,  
 Ո՞վ բեղ կանչեց կէս գիշերին խոր:  
 Չբկանն այստեղ բեղ պաշտողներ,  
 Մինչև ցայժմ չէ՛ շնչել չարն այստեղ:  
 Իմ սիրոյս վրայ — սրբութեանս անմեղ,  
 Մի՛ գընի՛լ դու մեղքի հետքեր.  
 Ո՞վ բեղ կանչեց:

Եւ չարատեր

Ոգին, անխօս, նենդ միտ ծիծաղեց,  
 Շիկնեց աչքը նախանձութեան.  
 Եւ նորից նրա հոգու մէջ զարթնեց  
 Թոյնը՝ նախկին ատելութեան.  
 Եւ սպառնաբար անաց — «նա իմն է»  
 «Թո՛ղ նրան, նա իմն է մի միայն:  
 «Ուշ եկար դու, պահապան, զո՛ւր է,  
 «Դու չես գատող ոչ ինձ, ոչ նրան:  
 «Ես մեծապանծ՝ կոյտի սրտի վրայ  
 «Սփե՛լ եմ իմ կնիքն արգէն.  
 «Այստեղ էլ բեղ սրբութիւն չըկայ.  
 «Իշխողն այստեղ, սիրողն՝ ես եմ»:  
 Եւ հրեշտակը ակուր աչքերով  
 Խեղճ զոհի վրայ լուկ նայեց.

Եւ թևերը դանդաղ թափ ատլով  
 Եթերքի մէջ խորասուզեց

.....



Թամար.

Չար է լեզուդ: Ասա՛, դու ո՞վ ես,  
 Դրա՞խտն ուղարկեց բեղ, թէ դժոխք.  
 Ի՞նչ ես ուզում:

Գեւ.

Դու աղարկե՛կ ես:

Թամար.

Բայց դու ո՞վ ես, սաս՛ մի խօսք...

Գեւ.

Ես նա եմ, որին լուծ էիր  
 Կէս գիշերւայ լուծեան մէջ.  
 Որի միտք-խորհուրդ՝ խօսեց հոգուդ.  
 Որի վիշտն աղօտ գուշակեցիր,  
 Որին տեգար երազիդ մէջ:  
 Նա, որի նայածք յոյսն է սպանում,  
 Հաղիւ թէ նա ծաղկի կրկին.  
 Նա եմ, որին ոչ ոք չէ սիրում,  
 Այլ անիծում է սղջ բնութիւն:  
 Ինձ ոչինչ են չափ, տարիք համայն,  
 Ես՝ ճորտերիս — մարդկանց սասան եմ,



Ոսոկն երկնքի, չարը բնութեան,  
 Եւ տնտնւմ ես, ահա ոտքդ եմ:  
 Եւ քեզ մատուցի ես կամօսին՝  
 Իմ հար սիրոյ մեղմ աղերսներ,  
 Առաջին տանջանքն իմ երկնային,  
 Եւ առաջին իմ արցունքներ:  
 Ո՛հ, դու ահանջ դիր ինձ վշտագին,  
 Ինձ բարուն և դէպի երկնք,  
 Կորոզ ես դարձնել դու մի խօսքով,  
 Եւ քո սիրոյ գուրբ հովանիով  
 Ծածկւած այնտեղ կը կանգնեմ իսկ,  
 Իբրև նոր հրեշտակ, նոր փայմունքով,  
 Ո՛հ, ահանջ դիր ինձ, կաղաչեմ,  
 Ես քո ձորան եմ, քեզ սիրում եմ:  
 Առաջին անգամ որ քեզ տեսայ,  
 Գաղտնի ատեցի ես, հաւատան,  
 Ամահաճութիւնս և ո՛ժտ անգամ:  
 Եւ ահամայնց զգացի Եանանձ  
 Երկրի թերի ուրախութեան՝  
 Զապրել քեզ պէս, ո՛հ, սիրտըս, ցաւ զգաց,  
 Եւ վախ — ապրել քեզնից բաժան:  
 Անարիւն սրտունն անսպասելի  
 Նորից մի յոյս ուժգին բազմեց.  
 Եւ հին վերքի տակ թախիծն էլի  
 Սողաց օձի պէս և շարժւեց.  
 Ի՞նչ է առանց քեզ անմահութիւն.  
 Իմ տէրութեան անողահմանութիւն:  
 Բառեր գազարկ, մեծաբարբառ,  
 Աստուածազուրկ արձակ տաճար:

## Թումար.

Թո՛ղ ինձ, ո՛հ, թո՛ղ ոգի նենդաւոր:  
 Լօխր, ես քեզ չեմ հաւատում:  
 Արարիչ, ո՛հ, ես չեմ կարում  
 Աղօթել քեզ... գրկել է բոլոր  
 Իմ թոյլ մտքիս մահառիթ թոյն.  
 Հաւատան, մահ կը պատճառես ինձ,  
 Բո խօսքերըդ կրակ են ու թոյն...  
 Ասո՛, ինչո՞ւ ես դու սիրում ինձ:

## ԴԱՆ.

Գեղեցկուհի, ինչո՞ւ — Եւ չք որ  
 Ես չը գիտեմ: Եւ նոր կեանքով լի,  
 Ես իմ գրիեց ցարդ յանցաւոր  
 Հպարտ հպարտ փուշ պսակն առի,  
 Կոխկռակցի ես անցեալն ավեն.  
 Ինձ գրախա, դժոխք քո աչքերունն են:  
 Սիրում եմ քեզ ո՛չ մարդկանց տենչով,  
 Որպէս դու չե՛ս կարող իսկի՝  
 Բոլոր ուժով բոլոր զգացմունքով  
 Ամահ մտքի և պատրանքի:  
 Հէնց աշխարհի սկզբից հոգուս մէջ  
 Դրոշմած, տպւած էր քո պատկեր.  
 Աչքիս առաջ նա դալիս էր  
 Տիեզերքի լաշն ծաւալի մէջ:  
 Վրդովելով վաղուց հոգիս  
 Ինձ անունըդ հնչում էր անոյշ.  
 Դրախտունն երեսկ օրերիս՝ ինձ



Պակասը դու էիր եթ, ով կոյս:  
 Թէ կարէիր, ո՛հ, ըմբռնել,  
 Ի՛նչ տառապանք է այն դառնալիր  
 Բոլոր կեանքի մէջ անկարեկիր  
 Եւ զուարճանալ, և չարչարել, —  
 Չարի համար գովք չսպասել,  
 Ոչ էլ բարուն՝ վարձատրութեան բան,  
 Քաշած ապրել, կարօտել եթ,  
 Եւ այս մարտ ու կուռվ յաւէտ  
 Անհաշտ լինել, առանց յաղթութեան:  
 Միշտ ափսոսալ, չընենալ կամք,  
 Ողջ գիտնալ, ողջ զգալ, ողջ տեսնել,  
 Եւ ամեն ինչ ատելու ձգտել,  
 Եւ ողջ աշխարհ զնել անարգ...  
 Հէնց որ թափւեց զլիսի երկնային  
 Անէծքը, — այդ օրւանից հէնց  
 Բնութեան ընդգրկանք ջերմագին  
 Յուստեանս ինձ համար սառեց...  
 Մթնոլորտը կապրյա փայլում էր,  
 Եւ ես տեսայ հարսնական զարդեր  
 Ասաղերի, ինձ ծանօթ վաղուց...  
 Ոսկէպսակ պար էին գործում.  
 Բայց ի՛նչ. մէկն էլ ինձ չէր ճանաչում,  
 Եղբայրակցիս՝ ինձ հինաուորց:  
 Գլեերին, ինձ նման արտաքուած,  
 Ես անյոյս՝ ինձ մօտ կանչեցի.  
 Բայց նրանց խօսք, զէմք, ակնարկ չարացած,  
 Մե՛ղք, ինքս էլ չը ճանաչեցի.  
 Եւ ահով, թափ տալով թևերըս,

Սըացայ... բայց ո՞ւր, ինչո՞ւ համար,  
 Չը գիտեմ: Ինձ հին ընկերներըս  
 Մերժեցին. և եղաւ աշխարհ,  
 Իբրև դրախտ, խուլ, համր ինձ համար:  
 Ըստ հաճոյքի ազատ հոսանքի,  
 Այդպէս է միշտ նաւ հողմարեկ  
 Անառագաստ, անկայմ, անղէկ...  
 Լողում առանց մի նպատակի:  
 Այդպէս է վաղ առաւօտանց  
 Որոտընդոստ ամպի հատուած,  
 Ջինջ բարձունքի վրայ սևին տալով,  
 Մէնակ, ոչ մի տեղ կանգ չառնելով,  
 Անմիտ, անհետք սըլանում է,  
 Ո՞րտեղից, ո՞ւր — Աստուած գիտէ:  
 Բայց մարդկանց վրայ ես շատ չիշխեցի,  
 Ո՛չ, չուսուցի ես շատ մեղք նրանց.  
 Ամեն ազնիւ բան գէշում էր,  
 Ամեն լաւ բան պարսաւում նրանց.  
 Շատ չէ... ընդ միշտ նրանց մէջ հանգրքի ես  
 Ջինջ հաւատքի կրակն արդէն.  
 Եւ իմ ջանքիս արդեօք արժե՞ն  
 Այդ յիմարներ, միշտ երկերես:  
 Եւ կրճերում թաք կացայ անիոյթ,  
 Շրջում էի իբր օդերեոյթ,  
 Մշուշի մէջ խոր կէս գիշերին...  
 Եւ սլանում էր ճանպորդ առանձին,  
 Մօտ երևած լոյսից խաբւած,  
 Եւ իւր ձիով վիճն ընկնելով,  
 Ձո՞ւր էր կանչում — հետքն արիւնային



Զգւած էր զառիվայրի վրայ...  
 Բայց սև ոխի մռայլ հաճոյքներին  
 Ես շատ երկար հաւան չեղայ:  
 Եւ հող, աւազ հանելով մերթ,  
 Խիստ փոթորկի հետ ես մրցելիս,  
 Մառախուղ ու կայծակ հագիս  
 Սլանում էի ամպերի հետ,  
 Որ խռովայոյզ տարրի խմբի մէջ  
 Խեղդեմ սրտիս տրտունջն անգամ,  
 Անխուսելի մտքից փրկելիմ ես, —  
 Եւ անմոռացն ես մոռանամ:  
 Ի՞նչ է վէպը խիստ զրկանքների,  
 Ցաւ ու հոգսի խեղճ մարդկութեան,  
 Ապագայ և անցեալ ազգերի,  
 Մի բոպէի մօտ մի միայն  
 Իմ չը բաշած չարչարանքների:  
 Ի՞նչ է մարդ, նրա կեանք ու տանջանք:  
 Անց կացան, անց կը կենան նրանք:  
 Յոյս կայ սպասում է արդար դատ,  
 Կարէ ներել, թէկուզ պատժել ինձ:  
 Սրանումն է իմ թախիճն անհատ,  
 Եւ չի լինիլ նրան վերջ, ինչպէս ինձ,  
 Եւ չի նիրհիլ նա շիրմի մէջ:  
 Մերև նա քծնում է օձի պէս,  
 Մերթ պրում ինձ, ճայթում բոցավառ,  
 Մերթ ճնշում է միտքըս, իբրև քար —  
 Կորած յոյսի և կրքերի  
 Շքեղ շիրմն անբակաելի:

Թամար.

Ինչի՞ս են պէտք քո տրամուծիւններ,  
 Ինչո՞ւ ես դու գանգատուում ինձ.  
 Մեղք գործեցիր...

Դեւ.

Միթէ քո՞ դէմն էր:

Թամար.

Կը լսեն մեզ...  
 Դեւ.

Դեւ.

Միայն ենք, ոչինչ:

Թամար.

Բայց Աստուած:

Դեւ.

Մեղ չի գիտիլ իսկի:  
 Զբաղւած իրմով, բան թէ երկրով:

Թամար.

Հապա պատիժ, տանջանք դժոխքի...

Դեւ.

Ոչինչ: Այնտեղ կ'երթանք երկսով:

Թամար.

Նոր բարեկամ, ով է՞ս որ լինիս,  
 Կորցնելով ես անգիստս ընդ միշտ,



Գաղտ բերկրանքով ես ակամայից  
 Ուշք եմ դընում նահատակիդ:  
 Բայց եթէ քո լեզուն խարդախ է,  
 Եթէ սուտը ծածկելով դու...  
 Ո՛հ, խնայիր ինձ... էլ այդ ի՛նչ փառք է,  
 Իմ հոգիս ի՛նչ ես անելու:  
 Ի՛նչ, երկնքին աւելի՛ թանգ եմ  
 Քո այն տեսած բոլորի՛ցն էլ.  
 Ո՛հ, նրանք էլ նոյնպէս գեղեցիկ են,  
 Ինչպէս այստեղ, դեռ ձեռք հողեղէն  
 Նրանց կոյս կողի՛ք, ո՛չ, չէ՛ ճմլել:  
 Ո՛չ, տո՛ւր երգումն ինձ օրհասական,  
 Ասա՛, տեսնում ես թախիծս այսքան.  
 Կանացի ցնորք, տեսնում ես դու...  
 Բռնի հոգուդ մէջ վախ գգւում ես,  
 Ողջ հասկացար, էլ դու ողջ գիտես:  
 Ի հարկէ ինձ կը խղճաս դու.  
 Դէ՛, երգւիր... չար գործերից իսկոյն  
 Հրաժարւել, խօսք տուր այժմ ինձ,  
 Մի՛թէ ոչ խօսք, և ոչ էլ երգում  
 Անդրժելի էլ չըկա՛ն ինչ:

## ԴԵՆ.

Կ'երգւեմ աշխարհի առ'ջին օրով,  
 Կ'երգւեմ նրա և վերջին օրով.  
 Կ'երգւեմ մեղանչման նշաւակով,  
 Եւ ճմարտի յաղթանակով:  
 Կ'երգւեմ տանջանքովս անկման դրախտից,  
 Եւ յաղթութեան շտապ ցընորքով,

Կ'երգւեմ քեզ հետ տեսութիւնով,  
 Եւ նոր սպառնացող հրաժեշտովն ինձ:  
 Կ'երգւեմ խմբով ոգիների,  
 Ինձ ստորադիր իմ եղբարց բաղդով,  
 Անվախ հրեշտակաց սուր ու թըրով,  
 Իմ այդ անքուն ստինների.  
 Գժուկք ու երկնքով ես երգւում եմ,  
 Քեզնով, երկրի սրբութիւնով,  
 Վերջին ակնարկովդ ես երգւում եմ,  
 Քո առաջին արտասուքով.  
 Քո անյիշաչար բեր'նի շնչով,  
 Քո գուռնեքով մետաքսաթել,  
 Երանութեամբ և տանջանքներով.  
 Երգւում եմ իմ վառ սիրովս էլ:  
 Հրաժարւեցի հին քէս ու ոխից,  
 Հրաժարւեցի հպարտ մտքից.  
 Նենգ հրապոյրի թոյնն այսօրւանից  
 Էլ չի՛ հանիլ մէկին գլխից:  
 Կ'ուզեմ ես սիրել, աղօթք անել  
 Բարուն հաւատ ես կընծայեմ.  
 Անկեղծ զղջմամբ ես կը սրբեմ  
 Ճակ'տիս, քեզ եթ արժանաւոր,  
 Հետքն երկնային անշէջ կրակի  
 Եւ չը գիտութեամբ աշխարհ անդորր,  
 Թող առանց ինձ իսպառ ծաղկի:  
 Ո՛հ, հաւատա՛, ցարդ ե՛ս քեզ միայն  
 Հասկացայ ու գնահատեցի:  
 Ընտրելով ես քեզ ինձ սրբարան,  
 Տէրութիւնս ողջ ոտքըդ դըրի



Իբր ընծայ, սիրոյդ եմ ես սպասում,  
 Ակնթարթիդ յաւիտեանք տամ,  
 Թամար, ես սերում, ինչպէս ոխում,  
 Անփոփոխ եմ և վեհական:  
 Եւ բեզ, եթերքի ազատ որդիս,  
 Կ'առնեմ երկիրն անդրասողային.  
 Եւ թագուհի կը լինիս երկրիս,  
 Ո՛վ դու յաւերժ իմ մտերիմ:  
 Անկարեկից, անցաւակից միշտ  
 Կըսկըսես ցած նսյել երկրին,  
 Որտեղ չըկայ ոչ բաղդ ճշմարիտ,  
 Ոչ մշտատե գեղեցկութիւն.  
 Ուր յանցանքներ եթ ու պատիժներ,  
 Ուր միմիայն սին կրքեր կան.  
 Ուր չեն իմանում ոչ անվեհեր  
 Ատել և ոչ սիրել անգամ:  
 Կամ թէ չը գիտե՞ս դու մինչև ցարդ,  
 Բոպէական սէր մարդկային:  
 Երիւնի յուզմո՞ւնք երիտասարդ:—  
 Սլանում է օր—կը սառչի արիւն,  
 Ո՛վ կը դիմանայ հրաժեշտի,  
 Հրապոյրի նոր գեղեցկութեան,  
 Յոգնածութեան և խիստ ձանձրոյթի,  
 Եւ ցնորքի ինքնահաւան:  
 Ո՛չ, բեզ մտերմիդ համար չէ այն  
 Երբէք բաղդով նշանակած,  
 Նեղ շրջանում թառամել անձայն,  
 Զար կոպտութեան ըստրկացած,  
 Փոքրոգի, պաղսիրտ մարդկերանց մէջ

Թշնամու և կեղծ ընկերի,  
 Անպտուղ յոյսի և վախի մէջ  
 Դատարկ ու խիստ տանջանքների:  
 Տրտում բարձր պատի քամակին  
 Դու չես հանգչիլ վառ կրքերից,  
 Աղօթքներով հեռու ես կրկին  
 Թէ Աստըծուց, թէ մարդկանցից:  
 Ո՛հ, ոչ, արարած դու գեղեցիկ,  
 Վերապահճած ես ուրիշին՝  
 Բեզ սպասում է այլ տանջանք և կիրք,  
 Ա՛յլ բերկրանքի խոր խորութիւն:  
 Թող քո նախկին իղձ, անմիտ փափագ,  
 Եւ իւր բաղդին՝ աշխարհն ամեն.  
 Հպարտ գիտութեան վիհն անյատակ  
 Կը բանամ բեզ դրա փոխարէն:  
 Ոգիների խումբն ինձ ծառայող  
 Իսկոյն ոտքըդ կը բերեմ ես.  
 Սպասուհիք թեթեւ ու հըմայող  
 Գեղեցկուհի, բեզ կը տամ ես.  
 Եւ արեւելեան պայծառ աստղից  
 Կը շինեմ բեզ թագ ոսկեման.  
 Կ'առնեմ գիշերւայ ցօղ ծաղկանցից,  
 Նրա վրայ այդ ցօղն ես շաղ կըտամ,  
 Վարդ վերջալոյսի ճառագայթով  
 Չերթ ժապաւէն, բեզ կը պատեմ.  
 Բաղցրանոյշ հօտի ջինջ բուրմունքով  
 Շրջակայ օդն ես կ'արբեցնեմ:  
 Մշտաժամ չքնաղ կաղերով էլ  
 Լսելիբըդ կը փայտայեմ.



Կը շինեմ շքեղ ապարանքներ  
 Բեհրուզից ու սաթից ամեն.  
 Կը սուզեմ ծովի մինչ յատակ խոր  
 Եւ կը թռչիմ ամպերից գէն,  
 Կը տամ բեզ երկրի բարիք բոլոր,  
 Ո՛հ, սիրեր ինձ...

## ԺԱ.

— Եւ Գւըը մեղմ  
 Հուպ եկաւ իւր ջերմ շրթունքներով  
 Թամարի դող-դող պոօշներին.  
 Հրապուրակից խօսք ու բառերով  
 Պատասխանեց նրա աղերսին:  
 Սուր ակնարկն աչքի մէջն էր նայում,  
 Այրում գիշերւայ մռայլի միջում  
 Շեշտակի նրա վրայ շողում էր  
 Իբրեւ դաշոյն, նա անդարձ էր:  
 Մե՛ղք, չար ոգին արդ պանծում էր:  
 Եւ նրա հրապուրի մահառիթ թոյն  
 Թամարի կուրծքն իսկոյն պատեց...  
 Տանջող ահեղ մի կանչ լսեց  
 Եւ յուզեց գիշերւայ խոր լուսթիւն:  
 Նրանում ամեն ինչ կար՝ սէր, տանջանք,  
 Եւ սաստ վերջին աղերսի հետ,  
 Եւ անջատումն անյոյս, երկնառաք—  
 Հրաժեշտ մատղաշ էակի հետ...

## ԺԲ.

Գիշերային մի ծեր պահապան,  
 Ոլոր պատի շուրջն այդ ժամին,  
 Կատարելով սահմանաժ ճանպան,  
 Ման էր գալիս կոչնակ ձեռին:  
 Եւ մատաղ՝ հաս կոյսի երջի մօտ  
 Իւր չափաւոր բայլքը կտրեց.  
 Եւ կոչնակի վրայ նա վախկոտ,  
 Յուզւած հոգևով ձեռը դրեց:  
 Եւ շրջակայ լուսթեան միջից  
 Կարծես լսում էր նրա ականջ  
 Երկու բեր՛նի համբոյր սիրալից,  
 Բոպէական հառաչ ու կանչ:  
 Եւ ամբարիշտ այդ կասկածանքն էլ  
 Ծերի սիրտը խոր թափանցեց...  
 Բայց անց կացաւ մի ակնթարթ էլ,  
 Եւ ողջ լուեց, և հեռուից հէնց  
 Միայն հովի մեղմ շունչը մերթ  
 Տերեւների տրտունջն էր բերում,  
 Եւ մռայլապատ ակերով տրտում  
 Շշնջում էր լեռնային գետ:  
 Սուրբ վկաների ջերմ աղօթքներ  
 Շտապում էր նա կրկնել ահից,  
 Որ չարամիտ Գւեի փորձանքներ  
 Հալածէ իւր մեղձսէր մտքից:  
 Խաչ է հանում գողգոթ մասներով  
 Յընտրայոյզ, լայն կրծքի վրան,



Եւ լուռ ու ժունջ, արագ բայլերով,  
Շարունակում է իւր ճանպան:

### ԺԳ.

Իբրև ազուր ննջող հրեշտակ  
Նա դագաղի մէջ էր արդ պառկած.  
Ծածկոցից էլ ջինջ ու սպիտակ  
Էր նրա ճակտի գոյնը սրբորտնած:  
Առ միշտ կախ են կոպեր խեղճ կոյսի...  
Բայց, ո՞հ. Տէր, ս՞վ չէր ասիլ թէ,  
Նրանց տակ ակնարկն եթ նիրհում է,  
Եւ չքնաղ, միայն սպասում է  
Կամ համբոյրի, կամ արշալոյսի:  
Բայց անօգուտ՝ արևի շող  
Նրա վրով սահում է ոսկեցօղ.  
Զո՞ւր տեղը նրանց անխօս, վշտամբեր  
Պաչում էին հարազատ պռօշներ.  
Ո՞հ, մահի կնիքն անշարժական  
Եղծել կարող չէ ոչ մի բան:  
Եւ ողջ, ուր վառ կեանքի ոյժն այնպէս  
Զգացմանց ազդում էր պարզ, յայտնապէս,  
Այժմ աճիւն է միայն չնչին:  
Տարօրինակ ժպիտը սառեց  
Րոպէսփայլ նրա բերանին:  
Բայց խաւար է գերեզմանի պէս  
Այն ծիծաղի տխուր իմաստ:  
Ի՞նչ կայ նրանում: Խիստ ճակատագրին  
Ծաղր արդեօք, թէ կասկած անյաղթ.

Սա՛նն անարգանք ուղղած մեր կեանքին,  
Թէ թշնամանք երկնքի դէմ:  
Երկրիս համար, ո՞հ, ինչ գիտեմ,  
Յաւիտեանս նրա իմաստն է ծածկւած:  
Հրապուրում է աչքը բռնի,  
Իբրև քանդակ հին տապանի,  
Ուր գրերի տակ, գուցէ մեզ անյայտ.  
Պահւած է վէպ հին դարերի,  
Իմաստութեան նշան մեզապատ,  
Մոռացւած հետք խոր մտքերի:  
Եւ խեղճ զոհին երկար ժամանակ  
Ձեռք չէր տալիս հրեշտակն աւերման.  
Եւ նրա գէմքի բոլոր գծեր  
Լցւած էին նոյն գեղով գեռ.  
Ինչպէս մարմար, խօսելու անզօր,  
Անիմաստ ու առանց զգացման,  
Խորհրդաւոր, մահի նման...  
Դեռ չէ եղել զուարճութեան մի օր,  
Ուր նախունն և այնքան հարուստ  
Լինէր կոյսի շքեղ հագուստ:  
Եւ հայրենի ծաղիկներ բոլոր  
(Ըստ հինաւուրց սովորութեան)  
Անոյշ բուրմունք են յցնում վրան,  
Եւ սեղմրւած մեռեալի ձեռքում,  
Մնաս բարով են աշխարհիս ասում:

### ԺԴ.

Հարևան թէ ազգական խմբով  
Տխուր ճանպի պիտ՝ ընկնէին.



Սպիտակ գըռուզ վարսը փետեղով,  
 Անխօս՝ հարուած տալով կրծքին.  
 Հուզալ հեծնում է յետին անգամ  
 Սպիտակ՝ բաշ ձին սանձակոտոր, —  
 Ձգւեց գնացքը: Նրանք երեք օր  
 երեք գիշեր ճանպայ պիտ՝ գնան:  
 Կից պապերի ոսկրներին . . .  
 Փորւած է նրան հանգիստ շիրիմ:  
 Ծեր Հուզալի մեծ պապերից մին,  
 Ճանպայ կտորոզ, կոխող գիւղ - շէն,  
 Երբ ցաւերը նրան շլթայեցին  
 Եւ զղջման ժամ հասաւ արդէն,  
 Հին մեղքերին նա ի բաւութիւն  
 Ուխտեց շինել մի սուրբ տաճար,  
 Ժայռի գլխին ողջ հատաքար,  
 Ուր բուր - բորան հնչում են ուժգին,  
 Ուր ցինն է եթ առնում դադար:  
 Եւ Կաղբէկի ձիւների միջում  
 Մէն միայն մի վանք բարձրացաւ.  
 Եւ չարասիրտ այն մարդի աճիւն  
 Գեռ նոր այնտեղ հանգստացաւ:  
 Եւ ժայռն եղաւ գերեզմանատուն,  
 Որ հարազատն է ամպերի,  
 Երկնքի մօտ, կարծես լինի  
 Աւելի տաք մեր յետին այն տուն.  
 Եւ մարդկանցից կարծես հեռի  
 Յետին բունը չէ՛ վրդովւելու...  
 Մեռելները, զ՛ճւր, չեն տեսնելու  
 Ոչ վիշտ, ոչ եխնդ հին օրերի:

Տոմ արթնում է / Գր 1880  
 Վախճանի մեծ պապերից մին

ԺԵ.

Ծաւալի մէջ կապոյտ եթերքի  
 Հրեշտակներից մէկը շտապով  
 Թռիչք էր առնում լոյս թւեերով,  
 Եւ աշխարհից մեղաւոր հոգի  
 Տանում էր նա դրկած սիրով:  
 Եւ իւր անոյշ, յուսատու խօսքեր  
 Նրա կասկածն էին ցրում.  
 Յանցանքի և տանջանքի հէտքեր  
 Արցունքով էր նրանից սրբում:  
 Հեռուից արդէն ձայներն երկնային  
 Հասնում էին նրանց — երբ յանկարծ,  
 Կտրելով ընդ մէջ արձակ ուղին  
 Գեւն էր սլանում վհից վիժած,  
 Հզօր իբրև հողմ աղմուկալի,  
 Եւ փայլակի պէս շողշողուն,  
 Եւ սէզ, անմիտ յանդգնութեամբ լի  
 «Նա իմն է, իմն է» էր կրկնում:  
 Եւ հրեշտակի կրծքին պիտու սեղմեց,  
 Խըլացնելով ահն աղթքով,  
 Թամարի սիրտ՝ դեղուն մեղքով:  
 Օրհաս ճակտի գիրը կատարեց՝  
 Նրա դէմ նորից նա կանգնած էր:  
 Բայց, Տէր, ո՞վ նրան կրճանաչէր:  
 Նայում էր ի՛նչ վրիժառու աչքով,  
 Ինչպէս լի էր մահատիթ թոյնով  
 Անհաշտ, անվերջ թշնամութեան.  
 Եւ փչում էր մեռելի ցուրտ հով

Տոմ արթնում է / Գր 1880

Ժ-Ե

Գր. հրատարակչի համար  
 Գր. հրատարակչի համար  
 Գր. հրատարակչի համար  
 Գր. հրատարակչի համար



Դեի անշարժ դէմքից... և նրան,  
 «Կորի՛ր, երկմիտ, մռայլ ոգի, կորի՛ր»,  
 Պատասխանեց Տիրոջ դեսպան.  
 Ես վերջ դրի քո յաղթուածեան,  
 Հասեւ է արդ քո դատի ժամ,  
 Եւ Աստուծոյ սուրբ արդար վճիռ:  
 Անցան օրեր չար փորձանքի,  
 Փտուէն զգեստովն այս աշխարհքի  
 Նրանից չարի կապանքն էլ ընկան,  
 Գիտ'նաս, վաղուց ենք սպասոււմ նրան:  
 Թամարի սիրտն էր ճիշտ նրանցից,  
 Որոնց կեանքն ասես վայրկեան լինի  
 Անտանելի չարչարանքների,  
 Եւ սփոփանքի անյուսալից:  
 Ընտիր օգից, Արարիչն Աստուած,  
 Հիւսեց նրանց լար կենդանարար,  
 Նրանք աշխարհիս համար չեն ստեղծւած,  
 Եւ ոչ աշխարհս է նրանց համար:  
 Ծանր գնով փրկեց մի միայն *մասով*  
 Իւր կասկածներ թշուառ Թամար...  
 Նա տանջոււմ էր և սիրոււմ այնքան,  
 Եւ դրախտ բացւեց սիրոյ համար:  
 Եւ հրեշտակը խոժոռ ակնարկով  
 Փորձիչ Դեի վրայ սուր նայեց,  
 Եւ թեւերը ուրախ թափ տալով,  
 Զինջ երկնքում խորասուզեց:  
 Եւ անիծեց չար Դեը յաղթուած  
 Իւր ցնորքներ ինքնահաճոյ.  
 Եւ նորից մէն միայն նա մնաց

Տիեզերքում, ինչպէս էր առաջ,  
 Առանց յոյսի, առանց սիրոյ:

Քարէ սարի զառիվայրում  
 Կայշաուռի մեծ հովտի վրայ դեռ,  
 Մինչև ցայսօր իսկ կան կանգուն  
 Աւերակի հին - հին կեռթիկներ:  
 Տղոց համար սարսափալի  
 Շատ հեքեթ կայ ասւած նրանց մասին...  
 Իբրև խուճապ կամ անխօս շիրիմ,  
 Վկայ երնեկ այն օրերի,  
 Ծառերի մէջ սեկին է տալիս:  
 Տրիւ էր ընկած մի շէն ցածրում,  
 Կանաչում է երկիր ծաղկալից,  
 Եւ ձայների խառնաղանձ թնդիւն  
 Կորչում է: Եւ հեռւից ղողանջով  
 Կարաւաններ են երևում.  
 Եւ ցած մէգի միջից ընկնելով,  
 Փայլում է գետն ու փրփրում:  
 Եւ յաւէտ մի մատաղհաս կեանքով,  
 Արևով և գարսնը ու գովով.  
 Ըսփոփւում է բնութիւն բորբոք,  
 Հանաքով, իբր մանուկ անհոգ:  
 Բայց տխուր է բերդը, կատարած  
 Երբեմն իւր շատ փառաւոր դեր.  
 Իբրև մի խեղճ ծեր երկարակեաց,  
 Քանց սիրասունը և ընկերներ:  
 Լուսնի ծագման են սպասում միայն



Աներևոյթ նրա բնակիչներ՝  
 Ազատութեան տօն է նրանց այն ժամ  
 Տղզում, վազում են վայր ու վեր:  
 Ալևոր սարսն, այդ նոր ճգնաւոր,  
 Ոստայնի հիմն է հիւսում կլոր,  
 Կանաչ ելեգներ ընտանիքով  
 Կտրում խաղում են ուրախ - ուրախ,  
 Եւ զգոյշ օձը, լի սեւ թոյնով,  
 Մութ ճեղքից դուրս է սողում անվախ,  
 Սալի վրայ հին պատշգամբի՝  
 Մէկ դառնում է օղակների,  
 Մէկ պարանի պէս պառկում է երկար,  
 Պողպատէ սրի նման փայլում,  
 Մոռացւած հին կուրի դաշտում,  
 Անպէտք՝ սպանւած դիւցազնի համար...  
 — Ողջ վայրագ է: Զրկան հետքեր  
 Հին անցեալի. տարիք, դարեր  
 Խնամքով սրբել են բոլորովին,  
 Եւ ո՛չ մի բան չէ յիշեցնում  
 Ոչ մեծանուն հուգարի մասին,  
 Եւ ոչ դստրի նրա սիրուն: ✓  
 Բայց տաճարը ժայռի գագաթին,  
 Ուր թաղւած են նրանց ոսկրներ,  
 Տիրոջ կամքովն է պահւած դեռ,  
 Տեսնում ես նրան թուխպերի միջին  
 Եւ դռների մօտ կանգնած են  
 Նրա պահպան հատաբարեր մռայլ,  
 Ծածկւած են ձեան շերտով մաքրափայլ  
 Եւ զրահի տեղ նրանց վրայ յաւէտ

Սառուցներ են փայլում և եթ:  
 Ձեան հիւսերի բնկոտ կարկառներ,  
 Լեռնակողից, իրրե ջրվէժներ,  
 Ցրտից յանկարծ պինդ կաշկանդւած,  
 Խոժոռադէմ շուրջն են կանգնած:  
 Եւ պահպան բուքն աչք է ածում,  
 Հին պատերից փչում փոշին,  
 Երկարաձիգ երգ է մերթ սարքում,  
 Մերթ ձայն տալիս ժամապահին:  
 Նրա համբաւը լսելով հեռում,  
 Սքանչելագործ այն տաճարին,  
 Արևելքից ամպեր մէն մի  
 Ծնրաբրուձեան են սիրով շտապում,  
 Եւ խումբ շիրիս — բարերի վրայ  
 Վաղուց արցունք թափող չըկայ:  
 Մռայլ կազբէկի ապառաժ ժայռեր  
 Պահպանում են որսն անբլթիթ  
 Եւ մարդկային յաւերժ տրտունջներ  
 Զեն խռովիլ նրանց յաւերժ հանգիստ:



32

\* \* \*

Անրսկզբի ուխտ պահելով  
Երկրածինն այնտեղ հնազանդ է ինձ.  
Եւ լսում են աստղեր ուշքով  
Շող-շող խաղալով ուրախալից:  
Երբ աղմուկուն բաղաբով եմ  
Ես անց կենում շտապ-շտապ բայլերով.  
Ծերերն, ահա, տղոց ասում են  
Մի ինքնագոհ և դառըն ժպտով  
Տեսէք, ահա՛ ձեզ լաւ տիպար,  
Սէփ էր, մեզ հետ ապրել չըկարաց,  
Հաւաստել էր ուզում — յիմար, —  
Թէ իւր բերնով խօսում է Աստուած:  
Մի նայեցէք դուք նրան, տղերք,  
Ինչպէ՛ս տրտում է, լղար, տժգոյն,  
Տեսէք, ինչպէ՛ս աղքատ է, մերկ,  
Ինչպէ՛ս են նրան ամենքն անարգում:





889

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.



3700

869

2015



